



ՊՐՈՖ. ԴԻՄԻՏ. Ա. Գ. ԱՐԲԱՇԱՅՅԱՆ

## ՏԱՐԵԹՎԵՐԻ ԵՎ ԱՄՍԱԹՎԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ\*

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈՔՔ ԿԱՄ ՄՏՏՐՈՒԿ ԹՎԱԿԱՆ

ՀԼԲ աղյուսակը վերջացավ 1084 թվականին: Նոր աղյուսակը կազմեց Հովհաննես Սարկավագ Խմատասերը Անիում: Հովհաննեսը հայտնի էր Սարկավագ մականոնով, ուստի և այդ թվականը կոչվեց նաև Սարկավագադիր: Նա հայկական տոմարի մէջ կատարեց Հետեւյալ փոփոխությունները: ա) Հայկական տոմարը շարժականից անշարժ դարձնելու համար ավելյաց ամսի վրա ավելացրեց չորս տարվա ընթացքում գոյացած նահանջ օրը ավելյաց՝ 5-ը դարձնելով 6. ր) հայկական տարեկութիւնը՝ նախասարդի 1-ը ամբացրեց օգոստոսի 11-ին և այդ հետեւյականությամբ կազմեց համապատասխան տախտակ և գ) անցյալում կուտակված նահանջների միավոր հայկական թվականությունից վերացնելու համար հայկական ՇԼԲ թվականը (որը համապատասխանում էր 1084 թվականին) կրկնեց, և տարեկութիւնը փետրվարի 29-ից տեղափոխեց օգոստոսի 11-ը, այլ խոսրով՝ ասած, հայկական թվականությունից զեն նետեց հավելյալ մեկ և կես տարի:

Հայկական տոմարն անշարժ դարձնելուց հետո զդվար չէր կազմել հայ-հովհեական ամսաթվերի զուգահեռ աղյուսակ, որը նույնպես կատարեց Հովհաննես Սարկավագը:

Սարկավագիր թվականը ներկա թվականին վերածելու համար անհրաժեշտ է տրված թվականին գումարել 1084, իսկ 1317 թվականից հետո՝ 1085:

\* Ակիզը տես «Էջմիածին» ամսագրի 1956 թվականի Ա-րում:

Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի № 7650 ձեռագիր Սվետարանը գրված է՝ «ի մարդեղութեան Տեառն Աստուծոյ մերոյ և գենարար Փրկին Յիսուսի Քրիստոսի ի ԱԴՃԸ (1332) ամսն, լուսաւոր վարդապետութեան սուրբ ծնողիս մերոյ և երջանկին Գրիգորի ԱՃԸ (1130) ամսն, և ի թուականութեանն Հայոց տոմարի, որ Սրբեական կոչի՝ 220 (778) և ի փոքր թվի՝ ՄԽԶ (246)...»<sup>27</sup>: Մարդեղության թվականը սխալ է, ԱԴՃԸ լինելու փոխարեն սխալ էնի ԱԴՃԸ (1330): Հայկական մեծ թվականն է՝  $778 + 552 = 1330$ , Փոքր թվականի ՄԽԶ-ին գումարենք 1084, հավասար է 1330-ի (246 + 1084 = 1330): Ուրեմն ձեռագիրը գրված է 1330 թվին:

Հովհասափ Սեբաստացին իր ընդօրինակած մի ձեռագրի դրչությունն ավարտելու թվականի մասին հետեւյալ է՝ հաղորդում:

«...Որ տարիին օք սիրոյ կրկին,  
ետու գրել ինձ ըզսորին:  
Ի ծննդենէ մարմնով քոյին,  
Ի թիւ յատուկ մի հազարին,  
Երեք հարիւր և ի յիսնին  
Եւ ի մի ամ սկսեալ ամին.  
Սակայն ի թիւ Ասքանազեան,  
Ցեւին հարիւր տօմարական,  
Եւ ի յիննրսուն աւարտական,  
Եւ ի յութեակ թիւն յանգական.  
Իսկ ի փոքրիկըն մեր շըշան,

27. Հայկական ՍՍԾ Պետական մատենադարանի ձեռագրի № 7650, թ. 358ա:

երկու հարիւրն թուական,  
և վախտոն և հինգ աւարտական...»<sup>28</sup>։  
Զեռագիրը գրված է սերկա թվականի  
1351-ին, Հայկական թվականի 798-ին  
(798+553=1351), փոքր թվականով՝ 265  
(265+1085=1350), եթե Հաշվենք նաև, որ  
օգոստոսի 11-ից հետո է եղել, ապա փոքր  
թվականով ևս կլինի 1351-ին։

Բեղյանի կայսերական գրադարանի սեփականությունը կազմող Հայկական մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ և յանդ ելեալ աւարտեցաւ տետրակո յետ երգարանիս 229. Հայկազեանո թուոյ և ի փոքր թուին ՄՄԴ, իսկ յաշնարհակալ զանութեան սուլթան Մահմուտին...»<sup>29</sup>, Այստեղ երկու թվականների տարրերությունը 552 է (786+553=1339; 254+1085=1339)։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի № 2680 ձեռագրի Հարանց վարքում Ս. Պարսամի վարքի թարգմանությունը կատարված է «ի թվականին Հայոց ի նորում շրջանի յամի բառաններորդի առաջներորդի...»<sup>30</sup>, Թարգմանությունը կատարված է 1125 թվին (41+1084=1125)։

Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի սեփականությունը կազմող Եղիշեի պատմության Հնագոյն ընդորինակությունը աւարտված է «ի Հայկազեան թուականի վեց հարիւրորդի և երկուց տասանց՝ եղական միուկ առաւելիալ և ըստ նորում շրջանիս միոյ յոթելինի և երից տասանց և քափից երկուց և ըստ ծննդեան Կենարարին և մերոյ ազատութեան ի մահուանէ յանմահութիւն են ամք ՈւժՀՔ»<sup>31</sup> (Գարեգին կաթողիկոս Հովսեյանի մոտ սիամմամբ ՈւժՀՔ): Զեռագիրը գրված է 1173-ին (88+1084=1172) (օգոստոսի 11-ից հետո է, ուրեմն պիտի ավելացնել մի տարի ևս), որը համապատասխանում է հիշված բրիստոնեական ՈւժՀՔ-ին և Հայկական 621-ին (621+552=1173)։

Հովհաննես Սարկավագը իր օրոք անդի ունեցած խավարման ժամանակի մասին հետեւյալ տեղեկությունն է Հաղորդում. «Յայսմ խաւարման արեգականն էր թուականն Հովսեյանցոց փոքր ՅԼԴ, և Հայոց»

28. Հ. Տաշլան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց մատենադարանին Միիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1885 թ., էջ 1020։

29. N. Karamianz, Handschriften Verzeichniss der Königliche Bibliothek zu Berlin, 1888, p. 26.

30. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագրի № 2680, թ. 119թ։

31. Գարեգին կաթողիկոս Հովսեյան, Հիշատակարանը ձեռագրաց, էջ 410։

նոյնպէս փոքրն ի՞ն... և էր շինութիւն թաղաքին Հովսեյանց ՊԿէ, իսկ Դիոկետիանոսի՝ Պէ ամ, և Անափոքի քաղաքի շինութեան ՈՒԿ, և Կիւրոս (երկի Տիւրոս?) քաղաքի ՈՆԻ է, իսկ ի գալստենէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՈՒՃԵ ամ ըստ հաստատում և ճշմարիտ համարոյ, և յԱվամայ՝ ԶՃԺ ամ ըստ Եթանանից թարգմանության...»<sup>32</sup>: Սարկավագի սերկա տեքստը հետաքրքիր է իր թվականների տեսակետով, որոնք փոքր ինչ տարրերությամբ տալիս են մեզ 1113—1115 թվականները, անշուշտ զբական սխալների հետևանքով: Հովսեյան 333-ը հավասար է 1113-ի (333+248+532), Հայոց փոքրը 1113-ի (29+1084), Հովսի շինության՝ 1115-ի (867+248), Դիոկետիանոսի՝ 1115-ի (831+284), Անափոքի շինության՝ 1115-ի (1063+52), Տյուրոսի շինության՝ 1115-ի (1420—305), քրիստոնեական թվականով նշանակված է արդեն 1115, և, վերջապես, Արարության թվականով հավասար է 1115-ի (6315—5198):

Ուշագրության արժանի է այն, որ Հովհաննես Սարկավագի տոմարական վերը հիշված բարեփոխությունից հետո, երբ նա նահանջ տարին զուրս էր արել Հայկական թվականից և արանհաշվումները Հայկական թվականով 552-ից իշեցրել 551-ի, Հայկական թվականի մեջ շարունակում են նահանջ տարվա Հաշվումները՝ տարրերությունները Հասցնելով 553-ի: Այդ ավելի հաստատում և օրինական ձև է առնում առանձնապես 1315—1318 թվականներից հետո, երբ Հայկական նահանջ տարինների կուտակումով աստղաբաշխական մի տարվա մեջ երկու անգամ նավասարդ տեղի ունեցավ: Հստ երևույթին Հովհաննես Սարկավագի տոմարական բարեփոխումները տարեհաշվի խնդրում տեսական բնույթ ունեցան և գործադրության մեջ շդրվեցին:

Բոլոր գեպքերում, 1315—1318 թվականներից հետո Հայկական թվականները պիտի հաշվել 553-ով: Բավական է ասել, որ պատմական գիտությունների թեկնածու է, Խաչիկյանի Հրատարակած 14-րդ դարի հիշատակարանների մեջ տոմարական Համեմատական թվականներ են պարունակում այդ տարվան պատկանող մոտ 32 ձեռագրեր, որոնցից 22-ը, անվիճելի, գումարվում է 553, 3-ը՝ 550, իսկ 5-ի թվականները զբրշկական սխալներով են: Տեքստը շժանրարենուելու համար շնոր ուղղում այլ օրինակներեկել: Այս հարցի մասին մենք պատրաստել ենք ընդարձակ մի ուսումնասիրություն, որը մտադիր ենք հրատարակել առաջիկայում:

32. Տե՛ս Հովհաննես Խմաստասիրի մատենագրությունը, որը ներկայում գտնվում է տպագրության մեջ:

Մեր կարծիքով, տոմարական այս նոր հաշիվների լույսի տակ հիմնովին պիտի վերանայել հայ ժողովրդի պատմության 8—15-րդ

դարերի ժամանակազրությունը և շակել 551-ի սխալ հաշվով կատարված բոլոր հաշվությունները:

#### 4. ԱԶԱՐԻՆ. ԶՈՒՊԱՅԵՑՈՒ ԹՎԱԿԱՆՆԵՐ

1616 թվականին վերջացավ «Սարկավագագիր» կամ «փոքր» կոչվող Ելք աղյուսակը՝ նոր-Զուղացում Ազարիա անունով մերկ կազմեց նոր Ելք աղյուսակ: Հայկական տոմարի այս երրորդ Ելք աղյուսակը սկիզբը հանդիսացավ նոր թվականի, որը մեր ժամանակության մեջ կոչվում է «Ազարիայի թվական»:

Ազարիա Զուղացեցու այս թվականը լայն գործածության մեջ չդրվեց. սրա թվականը գործածվեց միայն Պարսկաստանի և Հռնդկաստանի հայկական շրջաններում:

Ազարիայի թվականը մեր ներկա թվականին վեր ածելու համար անհրաժեշտ է սրա վրա ավելացնել 1616:

Բերենք Ազարիայի թվականի գործածության մի քանի օրինակ:

Նոր-Զուղացի Ս. Լուսավորիչ Ակադեցու դավթի մի տապանաքարի վրա կարդում նոր «Արև է տապան Փանոսի,  
Անմեղ մանկան նահատակի,  
Կրտսէր որդի Խօջամալի,  
Խելօք աղայ քազզը և բարի,  
Կսկիծ եթող եղբարց սրտի,  
Փոքր թիվն ձեկի  
Նախայ ամսի մին»<sup>33</sup>:

Փոքր, այսինքն Ազարիայի թվականով ձեկ-ն հավասար է ներկա թվականի 1723-ին ( $107 + 1616 = 1723$ ), իսկ նախա ամսի 1-ը հավասար է հունիսի 19-ին:

Բաղիք օգլու շափածու մի տաղում ասված է.

«Թիմ ձևԱ նադիր սարվանն վեր առեց  
կրակն՝

Ու միայն երկումս մարդ չեթող,  
Աւ թամամ աշխարս երես մին մա-  
հակն...»<sup>34</sup>:

Ազարիայի ձևԱ թվականը ներկա թվականի 1747-ն է ( $131 + 1616 = 1747$ ):

Քանդված Նոր-Զուղան վերականգնելու համար քաղաքի աշխի ընկող 26 հայ զեկա-վարներ կնքել են մի պայմանագիր՝ Ազարիայի 154 թվականին. «Գրվեցավ թիվն 154 նախայ 15», — կարդում ենք այդ պայմանագրի վերջում<sup>35</sup>: Ազարիա Զուղացեցու 154 թվականը հավասար է մեր ներկա թվականի

1770-ին ( $1616 + 154 = 1770$ ), իսկ նախա 15-ը՝ Հուլիսի 3-ին:

1798 թվականին Կալկաթայում տպված է փականի մեջ մեր ներկա թվականության 1752-ը Համաձաննեցված է Ազարիայի թվականի 136-ին, Հայոց թվականի 1201-ին, ըստ 5512-ին և Հիշրայի 1165-ին (էջ 91): Ներկա թվականի և Ազարիայի թվականի տարրերությունը, ինչպես անսնում ենք, դարձաւ 1616 և ( $1752 - 136 = 1616$ )<sup>36</sup>:

Ազարիան, ի գեղ, փորձել է որոշ փոփոխություններ մացնել Հայկական տոմարի մէջ. նա փոխել է Հայկական նախկին ամիսների անունները և տարեկույսը օգոստոսի 11-ից տեղափոխել մարտի 22-ին:

Ազարիա Զուղացին փորձել է նաև ամիսների պարական անունները Հայացնել՝ տալով նրանց նոր անունները Բերում ենք Ազարիայի և ներկա մեր ամսաթվերը զուղած են ձևով:

Յողաբեր— մարտի 21-ից ապրիլի 19-ը.  
Սաղկաւտ— ապրիլի 20-ից մայիսի 19-ը.  
Գետահոս— մայիսի 20-ից հոնիսի 18-ը.  
Պողաբեր— հոնիսի 19-ից հուլիսի 18-ը.  
Առատահոս— հուլիսի 19-ից օգոստոսի 17-ը.

Գոհուրիմ— օգոստոսի 18-ից սեպտեմբերի 16-ը.

Պողակիր— սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 16-ը.

Տերեարափ— հոկտեմբերի 17-ից նոյեմբերի 15-ը.

Չիմարեր— նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 15-ը.

Սառուցեալ— դեկտեմբերի 16-ից հունվարի 14-ը.

Հողմաշունչ— հունվարի 15-ից փետրվարի 13-ը.

Չիմահալ— Փետրվարի 14-ից մարտի 15-ը.

Մանիլակ— մարտի 16-ից մարտի 20-ը<sup>37</sup>.

Տոմարական հաշվությունների գործը հեշտացնելու համար անհրաժեշտ ենք համարում ընթերել հոգմենական, զին Հայկական և Ազարիա Զուղացին ամսաթվերի համեմատական աղյուսակները.

33. Տրբ-Հովհաննիսիանց, Պատմութիւն Նոր-Զուղացի, Համար. Ա., էջ 231:

34. Նույն տեղում, էջ 263:

35. Նույն տեղում, էջ 314:

36. Գրգուկ, որ կոչի էֆիմէրտէ, Կալկաթա, 1798 թ., էջ 91—105:

37. Ա. Աբրահամյան, Հայկական պալեոգրաֆիա, Երևան, 1955 թ., էջ 128:

ՀԱՄԵՐԱՍՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ ՀԱՅՈՅ, ՀՈՇԱՅՔԵՎՈՅ ԵՎ ԱԶԱՐԻԱՅԻ ԱՄՍԱԹՎԵՐԻ



## **5. ԱՐԱՐՁՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ**

Հայկական մատենագրության մեջ մի շաբաթվականներից հինգ գործածության ունի առարջության կոչվող թվականը: Ավանդական այս թվականը հայ մատենագրության մեջ հիշվում է տարրեր անուններով՝ «Թուականութիւն Աղամայ», «Թուականութիւն Ելանելոյն Աղամայ» ի դրախտեան», «Ժամանակական Աղամայ»:

Արարշության այս թվականը մի քանի  
տասնյակ տարրեր հաշվություն ունի: Հով-  
հաննես Խմաստասերը, իր «Մեկնուրին» տո-  
մարիս Հայկազնեայ» աշխատության մեջ,  
խոսելով արարշության թվականների տար-  
բերությունների մասին, տալիս է մատենա-  
գրության մեջ օգտագործվող հետևյալ թվա-  
կաններից ցանկը՝ հաշվելով ստեղծագործու-  
թյունից մինչև Հայոց թվականի սկիզբը:

- Անդրեասի ժամանակագրությունը՝ 6155.
  - Կայսերական ժամանակագրությունը՝ 5716.
  - Անանիա Շիրակունու ժամանակագրությունը՝ 5198.
  - Եպիփանի ժամանակագրությունը՝ 6053.
  - Երրայիցվոց ժամանակագրությունը՝ 6289.
  - Հրեից ժամանակագրությունը՝ 5824.
  - Շարժմատացվոց ժամանակագրությունը՝ 5832.
  - Հինգարյուրյակի ժամանակագրությունը՝ 5876:

Նույն հեղինակն անդրագառնալով թվականների այս տարրերությանը, նշում է. «Եւքանզի բազումք յառաջնոց վարդապետացն անտի գրեցին ըստ իւրաքանչիւր զիափանքինութեամբ՝ ի կիր առեալ վասն ստուգելոյ ամացն անցելոց, սակայն անմիաբան հանդիպին միմնանց»<sup>38</sup>: Մի այլ կապակցությամբ նա նշում է. «Եւ յարաշութենէն զժամանակն ու ոք կարասցէ դիտել ի մարդկանէ»<sup>39</sup>:

Հին գրականության մեջ արարշալիք թվականներից կիրառության մեջ են մտել հետևուանեռող.

- |   |          |
|---|----------|
| 1. Երբայրական                                     | 4000.    |
| 2. Սամարական (որով հրեանիրն առաջնորդվում էն ալժմ) | 4700.    |
| 3. Յթանասնից և Ելսիերիոսի                         | 5198/99. |
| 4. Կոստանդնուպոլիսի կամ Բյուզանդական              | 5508/09. |
| 5. Ավրիլիանոսի                                    | 5500/01. |

38. Հայկական ՍՍՌ Պետական մատենադարանի ձեռագիր № 1973, թ. 161-ը.

39. *Ural's Akademika*, p. 126-.

- |     |  |          |
|-----|--|----------|
| 6.  | Մոլուսն Սյունեցու և Ասո-<br>դիկի . . . . .           | 5276/77. |
| 7.  | Անանիա Շիրակացու . . . . .                           | 5279/80. |
| 8.  | Էսա Աղեքսանդրացու . . . . .                          | 5423/24. |
| 9.  | Անտիռյան . . . . .                                   | 5493/94. |
| 10. | Անդրեաս Տոմարագինի<br>և այլն <sup>40</sup> . . . . . | 5420/21. |

Արարշության այս թվականներից հայ մատենագրության մեջ օգտագործվել են հիմնականում չորսը՝ բլուզանդական, յոթանասնից, Աղեքսանդրյան և Հրեական։ Անհրաժշտ ենք համարում նրանց վրա կանգ առնել առանձին-առանձին և մեր մատենագրություննից բերել որոշ օրինակներ։

ա) Արարշորյան բյուզանդական թվականը: Այս թվականը կոչվում է նաև կայսերական կամ Կոստանդնոպոլիսի: Գործ է ածվել զիմանշուապես բյուզանդական կայսության սահմաններում: Այս թվականի սկզբից մինչև մեր ներկա թվականներուն հաշվվում է 5508 կամ 5509: Տարեթուան սկսում է սեպտեմբեր ամսի 1-ից (եթե դեպք տեղի է ունենալ սկսումնեմբերի 1-ից առաջ՝ հաշվվում է 5508, իսկ եթե հետո՝ 5509): Մինչև 1700 թվականը Ռուսաստանում գործ ածվող պաշտոնական թվարկությունն այս է հանդիսացել և գործածությունից դուրս է հանվել Պետրոս I-ի դեկտեմբերի 13-ի հրովարտակով և նրա տեղ մուտքել է ներկա թվականի գործածությունը<sup>41</sup>:

Սոկրատի Ակեղեցական պատմությունը և  
Սեղեստրոսի վարքը Փիլին Թրակացին  
թարգմանել է «Յամի վեցազարդորպի եր-  
կերերորդի շորորդի կենցաղովմ՝ անցատրի,  
որպէս ունի ժամանակագրութիւն Սուրբ Սո-  
փի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքա-  
ղաքին Կոստանդնուպոլապսի...»<sup>42</sup>: Այսպիսով  
թարգմանությունը կատարվել է մեր ներկա  
696 թվականին ( $6204 - 5508 = 696$ ):

Դիոնիսիսոս Արքապատացու «Յաղագի եկեղեցական և Կրինային բահանայութեան» աշխատությունը Ստեփանոս Սյունեցին թարգմանել և մեկնել է «ի վեցհազարերորդի երկերիւթերորդի բաններորդի ամի արարածոց, ըստ յօնարքէն թուու ի շորեթառանիւրորդի ոնդիքանին, լերիւրդ ամի թագաւորու-

40. 2. Մ. Զամշլան, Պատմութիւն Հայոց, Հատոր Գ, Անհետիկ, 1786 թ., (ան' Հատորի վերջում կցված է մանակագրությունը):

<sup>41</sup>. Л. В. Черепин, Русская хронология, Москва, 1894 г., стр. 24—33.

42. Արք. Տեր-Մովսիսյան, Մովկրտալ Սրբաւոտի-  
կոսի Եկեղեցական պատմութիւն, Վաղարշապատ, 1897  
թ., էջ ԺԵ:

թիանն Փիլիպպոսի...<sup>43</sup>; Թարգմանությունը կատարվել է 712 թվականին (6220—5508 = 712); Փիլիպպոս կայսեր երկրորդ տարին, իրոք, 712 է, նա զահակալել է 711 թվականին:

Գրիգոր Նորացու աշխատությունները Միմոն կրոնափրու բնդորինակել է «Յամի 821-երրորդ յափառենից... յիշխանութեան իւանէ Աթապակին...»<sup>44</sup>; Ընդօրինակված է 1227 թվին (6735—5508=1227):

Սերաստիայի Ս. նշան վաճրի № 2 ձեռագիրն բնդորինակված է սի թուփս յափառենից, որ է Աղամացի ՅՊՊ (6821), և ըստ Հայկական թուփանի 24թ, յամսեանն յուփսի մը (18)... ի թագաւարութեան Հայոց պարոն Աւշինի...»<sup>45</sup>; Զեռագիրն բնդորինակվել է 1313 թվականին (6821—5508=1313), որը համապատասխանում է Հայկական Չիթին (762+551=1313):

բ) Արարշորյան յորանասնից թվականը: Ըստ Յոթանասնից թարգմանության թվաչափի, ստեղծագործություննից մինչեւ մեր թվականը պիտի Հաշվել 5198 կամ 5199՝ նայած սեպտեմբերից առաջ է, թե Հետո՝ տարբությունը հաշվերդ սեպտեմբերի 1-ից:

Վենետիկի Մխիթարյանների մատենագարանի № 129 ձեռագիր Ավետարանն բնդորինակվել է Թեոդորապուտը «յելիցն Աղամայ ի դրախտէն առ մեզ Հազարց վեցից և յորից Հարիւրից, Կրիստոն յաւելեալ ամաւոք իսկ ի ծագմանէն բանին Աստուծոյ՝ Հայկարի միոյ և երկու Հարիւրից, Երեսուն և երկուս յաւեկալ ամաւոք, և Հայկազեան տումարին՝ վեցից Հարիւրից և թանասուն և ինն ամաց...»<sup>46</sup>; Արարշության 6430-ից եթե Հանելու լինենք յոթանասնից թվահաշվով 5198, կմնան 1232, որը և ձեռագրի գրչության թվականն է: Նա համապատասխանում է բնագրում Հիշված Հայկական 679 թվականին, եթե նրան գումարելու լինենք ոչ թե 551, այլ 553 (679+553=1232): (Այս ժամանին խոսել ենք առելում):

Վենետիկի Մխիթարյանների մատենագարանի մի ձեռագրում, «Պատճառ սահմանաց գրաց» աշխատության թարգմանության ավարտման թվականն է նշանակված Հետևյալը. «Յելանելոյն Աղամայ ի դրախտէն մինչեւ ի յաւարառումն գրոց էր թիւ ժամանակին ՖՊ, ոյ յելանելոյն Աղամայ մինչ ի Քրիստոս՝ էր ԲՇԴՌ, և ի ծննդենէն Քրիստոսի ԲՇՁՌ ամ. իսկ թիյն մեծ Հայոց էր ՉԿԳ»:

43. Գարեգին կաթողիկոս Հովսեփյան, Հիշատակառնը ձեռագրաց, Անթիմիաս, 1951 թ., էջ 53—54:

44. Նույն ակնում, էջ 848:

45. Լ. Խաչիկյան, ԺԴ գարի Հայերնեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950 թ., էջ 96:

46. Հ. Բ. Սարգսյան, Ցուցակ ձեռագրաց Հատուր Ա, էջ 567:

եթե այսուեղ ուզգերու լինենք գրչական մի փարիկ սխալ—ՑՊԴ՝ ՑՇԺԴ-ով, ապա բորբ թվահաշվիները կհամապատասխանեն իրար—6514—5198=1316; Ճիշտ կստաց-վի նաև Հայկական թվականը, եթե ավելաց-ներու լինենք ո՞չ թե 551, այս 553 (763+553=1316):

Ե. Լալայանի Վասպուրականի ձեռագրաց ցուցակում նկարագրված Վանի Արարաց Կ. կեղեցու № 11 Ավետարանը գրված է «ի մեծ թուփս, ի յիշատակ շրջապատութեան արեգա-կան ստորիշիւր երկնալու ճանապարհաւ-յիրկնից ի յերկիր Հայելով ըստ արարշու-թեանցն շափեալ լիլանելոյն Աղամայ ի դրախտէն ԶՌ և ԶՇ ամ ըստ Եթանասնիցն, որով մեր վարիմք եւ ի մարդեղութենէ թանին Աստուծոյ անժմանակ էին և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ամս ԱԴՇԻԱՀ<sup>47</sup>: Այսուեղ անհրաժեշտ է ուղղել մի անվիճելի սխալ—Արարշութեան ԶՌ և ԶՇ թվականն ուղղել ԶՌ և ԶՇ մետք և երկու թվականների Հաշվինե-րը Հշտիվ կհամապատասխանեն իրար՝ 6620—5199=1421:

Վարդան Արևելյանի խոսելով արարշության թվականին մասին, յոթանասնից թվականն ընթառնում է 5198. «Եւ յելիցն Աղամայ ըստ Եօնիանից, գրում է նա, — Հինգ Հազար Հարիր իննուուն և ութէ»<sup>48</sup>:

զ) Արարշության Աղեքսանդրյան կամ հինգնայուրյալի թվական: Այս թվականով ստեղծագործությունից մինչեւ մեր թվականի սկիզբը Հաշվվում է 5423 կամ 5424 տարի (Եթե սեպտեմբերից առաջ է՝ 5423, իսկ Հե-շուն՝ 5424):

Վենետիկի Մխիթարյանների № 207 ձեռ-ընտիր ձեռագրի գրչությունն ավարտված է «յելանելոյն Աղամայ ի փառակենցադ գրախտէն ամք ԶՌէՇԿԶ և լիլ ծննդենէ Կե-նարարին մերոյ ամք ԱԴՇԻԳ...»<sup>49</sup>: Արար-շության թվականն այսուեղ Հիշված է Ադքե-սանդրյան թվահաշվով, ուստի 6766 թվից եթե Հանենք 5423-ը, ապա ձեռագրի գրու-թյան թվականը կլինի 1343, որը և կհամա-պատասխանի վերև բերված տեքստում Հիշ-ված ներկա թվականի ԱԴՇԻԳ-ին, այսինքն՝ 1343-ին:

Երգնկայի Ս. Սոփիա Եկեղեցու մի Ավե-տարանի գրչությունն ավարտված է «ի թուա-րերութեանս ԶԿԴ (տեքստում սխալմանը՝ 22Դ) և ի գալստեան Կենարարին մե-րոյ ԱՇԺԶ, իսկ յելանելոյն նախնի մարդու»:

47. Ե. Լալայան, Ցուցակ Հայերէն ձեռագրաց Վաս-

պուրականի, Թիֆլիս, 1915 թ., էջ 330:

48. Մեծին Վարդանայ Բարձրերդցոյ Պատճութիւն-արկերական, Մոսկվա, 1861 թ., էջ 48:

49. Հ. Բ. Սարգսյան, Ցուցակ ձեռագրաց, Հատու-

Ա, էջ 174:

յանուշակ վայրէն ՅՉԱ...<sup>50</sup>, Արարչության հիշված թվականը Աղեքսանդրյան թվահաշվով է, ուստի 6739-ից պիտի հանենք 5423, կմնա 1316, որը և կհամապատասխանի ներկա թվականի ՌՅԹԶ-ին, այսինքն 1316-ին: Հայկական 764-ին եթե գումարենք 552, դարձյալ կտացվի 1316:

Ազգագրագետ Ե. Լալայանի Վասպուրականում նկարագրած մի «Հարանց վարք» դրված է «ի թվին ամաց յելանելոյն ի դրախտէն Աղամայ» ի ՑՈՂ ամի ըստ մեծի հային տոմարական արհեստին, և դարձեալ յԱղամայ ի ՑՊՄԵ ամի հինգհարիւրեկին, որ է Էսայ իմաստասիրին, որ ի յԱղեքսանդրիայն ժողովին և սա է բուն թվական Կիկլոնին, և, դարձեալ յԱղամայ ՑՊՄԵ ամի ըստ Անանիա վարդապետին Շիրակայնոյ, և ի ծննդենէ կենարար Փրկչին մերոյ Ցիստափ Քրիստոսի ի ՌՆԼԲ ամի... և թվին Հայոց ըստ աբեթական տօմարի ՊՀԹ ամի...<sup>51</sup>: Արարշության 6630-ից հանենք յոթանասնից թվականը՝ 5198, ներկա թվականով կմնա 1432, արարչության 6855-ից հանենք հինգհարյուրյակի թվահաշվով 5423, կմնա 1432, արարշության 6711 թվից հանենք Շիրակացու թվահաշվով 5279, կմնա 1432: Հայկական 879-ին գումարենք 553, կտացվի 1432: Թվարկված այս երեք թվականներն էլ համապատասխանում են տեքստում հիշված ներկա թվականի ՌՆԼԲ-ին:

Քրիստանական թանգարանի Հայկական րամնի № 19 ձեռագիրը դրված է. «...Աղամայ մինչև ցայսը՝ ամք ՑԶԿէ, իսկ Հայկազելայն թվականին՝ ՑԶԱ, և Հոռմայեցոց մեծ թվականին ՌՄԴԴ, և Ցըշանն, որ է փոքր թվականն ՄԼ ի յերկիրս ԲԳՆԴունեաց, որ այժմ նլաթ կոչվ...»<sup>52</sup>:

Այս հիշատակարանը անգերեն թարգմանությամբ հրատարակել է Հայագետ Ֆ. Կոնիրիը և նշել, որ հիշատակարանում թվականներն աղավաղված են — ոչ մեկը չի համապատասխանում մյուսին՝ Իրականում ոչ մի աղավաղում չկա: — ա) Արարչության ՑԶԿէ թվականը ուղղելով ՑԶԿէ ձեռվով, նրանից պիտի հանենք ոչ թե 5190, ինչպես կարծում է Կոնիրիը, այլ հրեական թվահաշվով՝ 5423 ( $6965 - 5423 = 1542$ ): բ) Հայկական թվականին պիտի գումարենք ոչ թե 550, ինչպես վարվել է Կոնիրիը, այլ

551 ( $991 + 551 = 1542$ ): գ) Հոռմեհական թվականին գումարել ոչ թե 247, այլ 248 ( $1294 + 248 = 1542$ ): դ) Եվ, վերջապես, «փոքր թվական»-ի շրջան ասելով գորիշը նկատի ունի ոչ թե մտրուկ թվականը, այլ շարժական նոր նավասարդով սկսող տարին, որը հաշվով է 1312-ից, ուստի և նա հավասար

է 1542-ի ( $1312 + 230 = 1542$ ):

գ) Արցախության հրեական թվական: Արարշության հրեական թվականով ստեղծագործությունը մինչև մեր ներկա թվականը հաշվով է 5271 կամ 5272 թվական:

Վանի Հայկավանից եկեղեցու № 226 Ավետարանը ընդորինակված է եղել «...յելիցն նախաստեղծիցն մարդոցն ի դրախտէն՝ ՑՌ և ԵՌ՝ և ինն ամ ըստ Եթանասնիցն, որում մեք վարիմք, և է իր մարդեղութենէ Բանին Աստուծոյ... ամս ՌՅԻԲ<sup>54</sup>: Զեռագիրը դրված է 1328 թվականին: Արարշության թվականն այստեղ հրեական թվահաշվով է և համընկնում է բնագրում հիշված մեր ներկա թվականին ( $6599 - 5271 = 1328$ ):

Հայկական ՍՍՌ Պետական մատենագարանի № 4217 ձեռագիր Ավետարանը ընդորինակված է «ըստ արարշութեանցն չափեալ յելանելոյն Աղամայ ի դրախտէն՝ ՑՌ և ՑՌ՝ և Ա ամ (6601), ըստ Եթանասնիցն որում մեք վարիմք, և է ի մարդեղութենէ Բանին Աստուծոյ... ամս ՌՅԻ (1330)<sup>55</sup>: Արարշության հրեական 6601 թվականից հանենք 5271 թվականը, կմնա 1330, որը և ճիշտ համընկնում է քրիստոնեական ՌՅԼ-ին:

Մոկսի Դաշտ թաղի Ս. Հակոբ եկեղեցու մի ձեռագիր Ավետարան ընդորինակված է «յելիանելոյն Աղամայ ի դրախտէն՝ ՑՌ և ՑՌ՝ (6607) ամ ըստ Եթանասնիցն, որում մեք վարիմք, և է ի մարդեղութենէ Բանին Աստուծոյ... ամս ՌՅԼ (Ես)<sup>56</sup>: Եթե 6607 թվից հանենք հրեական 5272 թվականը, կմնա 1335 թիվ, որը համապատասխանում է բնագրում հիշված ներկա թվականի 1335-ին:

Զավախքի Վաշագան գյուղի եկեղեցու Ավետարանը գրված է «ի մեծ թուխս... յելանելոյն Աղամայ ի դրախտէն՝ ՑՌ ՑՌ՝ [Ժ]Ա. ամ և ի մարդեղութենէ Բանին Աստուծոյ անժամանակ ինն և Փրկչին Ցիստափ Քրիստոսի ամս ՌՅԼ...»<sup>57</sup>: Եթե 6601-ից հանելու լինենք 1339 թվականը, կմնա 5272, որը արարշության հրեական թվականն է:

54. Ե. Լալայանի ձեռագրաց ցուցակ, էջ 180:

55. Ե. Լալայանի, ԺԴ գարի հայերեն ձեռագրերի հատակարաններ, էջ 234:

56. Ե. Լալայանի ձեռագրաց ցուցակ, էջ 193:

57. Ե. Լալայան, Ազգագրական հանդէս, 1887 թ., բգիրը, էջ 284: